# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
## N 16/22-2 որոշման

*«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կարիքների համար **Քիմիական նյութերի (կալցիումի հիպոքլորիտի հաբերի)** ձեռքբերման N «**ՀՀԳՆՋՏՊԿ-ՀՋԿԸ-ՇՀԱՊՁԲ-15/15-16/22**» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի*

ք. Երևան **20.04.2016թ.**

Մասնակցում էին՝ **Նախագահ**՝ Ա. Մարտիրոսյան

**Անդամներ**՝ Դ. Գասպարյան, Կ. Անդրիասյան, Դ. Ադամյան

**Քարտուղար**՝ Հ. Հովհաննիսյան

**Նիստին ներկա էին** «Յունիքիմ ՍՊԸ» ՍՊԸ, «Մեդիսար» ՍՊԸ և «Թագ ՀԷՄ» ՍՊԸ ներկայացուցիչները

**1. Տեղեկություններ գնման նախնական պայմանագիր կնքած այն անձանց (անձի) մասին, որոնց պատվիրատուն ուղարկել է գնային առաջարկ ներկայացնելու ծանուցում**

«ՀՀԳՆՋՏՊԿ-ՀՋԿԸ-ՇՀԱՊՁԲ-15/15-16/22 ծածկագրով մրցույթի շրջանակներում apranq-15-15@shh.gnumner.am էլեկտրոնային հասցեով հայտ է ուղարկվել «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ շրջանակային համաձայնագրեր կնքած բոլոր մասնակիցներին, միաժամանակ հայտարարությունը տեղադրվել է http://gnumner.am/?module=hosting&utility=file_download&file=170358 հասցեում:

**2. Տեղեկություններ գնային առաջարկներ ներկայացրած մասնակիցների մասին**

| N | Մասնակցի | |
|---|---|---|
| | **Անվանումը** | **Գնային առաջարկը ներկայացնելու ամիսը, ամսաթիվը** |
| 1 | «Թագ ՀԷՄ» ՍՊԸ | 15.04.2016թ. |
| 2 | «Յունիքիմ» ՍՊԸ | 20.04.2016թ. |
| 3 | «Մեդիսար» ՍՊԸ | 20.04.2016թ. |

2.1 Գնային առաջարկներ պարունակող ծրարները բացվել են 20.04.2016թ. ժամը $15^{30}$-ին Երևան Վարդանանց փակ. 8, 5-րդ հարկ, Ադմինիստրատիվ և ֆինանսական տնօրենի աշխատասենյակում:

2.2 Գնային առաջարկներ այլ մասնակիցներ չեն ներկայացրել:

**3. Տվյալներ ծրարները կազմելու և ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջների համապատասխանության մասին.**

«Յունիքիմ», «Թագ ՀԷՄ» և «Մեդիսար» ՍՊԸ-ների կողմից ներկայացված ծրարները կազմված էր հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

**4. Տվյալներ բացված յուրաքանչյուր առաջարկում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.**

N «***ՀՀԳՆՋՏՊԿ-ՀՋԿԸ-ՇՀԱՊՁԲ-15/15-16/22***» ծածկագրով մրցույթի գնային առաջարկների ներկայացման հրավերով սահմանված կարգով մասնակիցները փակ կնքված ծրարով ներկայացրել էին գնային առաջարկ՝, ինքնարժեքի հաշվարկ, հայտարարություն մրցույթի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իրենց հատկանիշների համապատասխանության և գրանցման պահից հետո դրանց առկայության, ինչպես նաև հրավերով սահմանված տեխնիկական հատկանիշներին համապատասխան *ապրանքների մատակարարման* մասին: Բոլոր ներկայացված փաստաթղթերը կազմվել են բնօրինակից և 2 օրինակ պատճեններից:

## 5. Մասնակիցների գնային առաջարկները

| h/h | Ապրանքի անվանումը | Չափման միավորը | Գնի առաջարկները / դրամ/ | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | «Թագ ՀԷՄ» ՍՊԸ | | «Յունիքիմ» ՍՊԸ | | «Մեդիսար» ՍՊԸ | |
| | | | Առանց ԱԱՀ | Գինը | Առանց ԱԱՀ | Գինը | Առանց ԱԱՀ | Գինը |
| 1 | **Կալցիումի հիպոքլորիտի հաբեր /74.52 տոննա/** | տոննա | 135 688 500 | 162 826 200 | 131 527 800 | 157 833 360 | **124 166 667** | **149 000 000** |

«Յունիքիմ», «Թագ ՀԷՄ» և «Մեդիսար» ՍՊԸ-ների կողմից մրցույթի գնային առաջարկների ինքնարժեքի հաշվարկում թվաբանական անճշտություններ չկան:

## 6. Հանձնաժողովը որոշեց.

6.1 1. չափաբաժնով

1-ին տեղ զբաղեցնող ճանաչել «Մեդիսար» ՍՊԸ -ին
2-րդ տեղ զբաղեցնող ճանաչել «Յունիքիմ» ՍՊԸ -ին
3-րդ տեղ զբաղեցնող ճանաչել «Թագ ՀԷՄ» ՍՊԸ -ին

6.2 Հանձնարարել Հանձնաժողովի քարտուղարին՝
6.2.1 Սույն արձանագրության լուսապատճենը տրամադրել մասնակիցներին,
6.2.2 Հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը էլեկտրոնային եղանակով՝

*ա/ Հարցում ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ ըստ առանձին չափաբաժինների առաջին տեղեր զբաղեցրած մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ,*

*բ/. Ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:*

6.3 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 27.04.2016թ-ին ժ. 10:[00]-ին ՝ «ք. Երևան Վարդանանց փակ. 8, 5-րդ հարկ, Ադմինիստրատիվ և ֆինանսական տնօրենի աշխատասենյակ» հասցեում:

**Ընդունվել է կողմ 4, դեմ 0:**

## 7. Նիստին ներկա գտնվող հանձնաժողովի անդամների անուններն ու ազգանունները.

Հանձնաժողովի նախագահ՝ ............................ Արմեն Մարտիրոսյան

Հանձնաժողովի անդամներ՝ ............................ Դավիթ Գասպարյան

............................ Կարեն Անդրիասյան

............................ Դավիթ Ադամյան

Հանձնաժողովի քարտուղար՝ ............................ Հայկ Հովհաննիսյան

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կարիքների համար ֆիդերային նշանների (կասետային ներդրումների տակդիրով) ձեռքբերման N «ՀԷՑ-ԳՀԱՊՁԲ-ՀԷՑ-ԳՀԱՊՁԲ-15/15-16/221 ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման նիստին ներկա մասնակիցների ներկայացուցիչների ցանկ

| Մասնակցի անվանումը | Մասնակցի ներկայացուցիչ | Ստորագրություն |
|---|---|---|
| «Յունիֆլեքս» ՍՊԸ | Արմենուհի [illegible] | [signature] |
| «Մեգաֆորս» ՍՊԸ | [illegible] | [signature] |
| «ԲԱԳ 2000» ՍՊԸ | Մանուկ Թովմասյան | [signature] |

ք. Երևան, 20/06/2016
ժամը 15:45